

Պ Ա Ր Ս Կ Ա Հ Ա Յ Ա Շ ՈՒ Ղ Ն Ե Ր

Ա Շ ՈՒ Ղ Ա Մ Ի Ր ՕՂԼԻԻ

(ՆՐԱ ՄԱՀՈՒԱՆ 100-ԱՄԵԱԿԻ ԽՈՒԹՈՎ)

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Նոր-Ջուղայի հայոց գերեզմանատանը, մի անշուք շիրմի տակ, հանգչում են անհուններն Ամիր օղլու աշուղի, որ 18րդ դարի երկրորդ կիսին պարսկահայ երգի-ծական զբաղմունքի մասնակցի հանգիստացաւ:

Նրա հողակոյտի վրայ դրած է անտաշ մի քար, որի վերեւի մասում քանդակած է երգչի նկարը: Այդ նկարում աշուղը ծալապատիկ նստած նւագում է զօնքուրը ձեռքին. նա իր խորհրդաւոր տեսքով անցեալի փառքն է յիշեցնում և համակում դիտողին մի շարք ուրախ և տխուր ըզգացումներով: Քարի վերեւում, երկու անգիններէրց, ողջունում են երգչին երկու հրեշտակներ, իսկ ցածի մասում փորաքրուած է հետեւեալ անպաճոյճ ոտանաւորը.

Ամիր օղլուս է այս տապան,
Որ խօսէի շատ տաղաբան.
Յաւուրս միոյ էի կենդան,
Շրջէի ես աշխարհ համայն:

Յորժամ եկի ի գերեզման,
Հինգ զազ կտաւ ունիմ պատան.
Գիրս կարդէք ամենեքեան,
Միտ ամէք ձեր օրն մահուան:

Ոչ թէ մահն էր իմ միայն,
Կա հաստարակ մարդուս բնութեան.

Արդ փոխեցայ աստէն առ այն,
Որ ետ ինձ շուեչ կենդանական:

Ի 1826 թն. փրկչական ի Նախայ 25³

Ահա գրաւոր այս յիշատակարանը միայն մնացել է Ամիր օղլի աշուղի մասին. իսկ նրա կեանքի, գործունէութեան և այլ զօնքի վերաբերմամբ չկայ ոչ մի տարիչ յիշատակագիր և մինչեւ օրս էլ նա չէ ուսումնասիրւած: Կարելի է ասել նա մուսուլմանական է: Նրա մասին պէտք եղած նկիւնների մէջ մասը հաւաքել ենք մի քանի ծերունիների պատմամաներից, որոնք մինչև այսօր էլ իրենց յիշողութեան մէջ գեռ վառ են պահել երգչի յիշատակը: Բայց այդ տեղեկութիւններն էլ թերի են և կցկտուր: Այնուամենայնիւ մենք տանք այն ուսողը, ինչ որ ունինք մեր ձեռքի ներքոյ:

ԱՄԻՐ ՕՂԼԻԻ

ԿԵԱՆՔԻ ՈՒ ԿՐԹՈՒԹԻՒՆՆԸ

Նոր-Ջուղայի և հնդկահայ պատմութեան մէջ՝ երգչի տոհմի մասին յիշատակւում է այսպէս, որ Ամիրեանց ազգատոհմից աղա Յուսէփ Յովհաննէս Ամիրեանը, 18րդ դարում թողնելով Նոր-Ջուղան, անցնում է Չավա կղզու Սմարմազ քաղաքը, ուր զբաղւում է աֆիոնի գործով և կարճ ժամանակամիջոցում աշագին հարստութիւն է դիւում: Յետագայում նրա հարստութիւնն այնքան է մեծանում, որ այլեւս նա կառնուաւոր հաշիւատար չի պահում և երբ հարցնում են իրեն, թէ ինչպէս է վրայ ահանում իր գործակատարներին՝ պատասխանում է. «Մինչ ճէր տայ ինձ առանց չափոյ, զմարդ նրա ինձ դնել կըտայ»: Նա ծրագրում է դուրսով գնել իր նախաներնեքի երկիրները, այն է Ղարաբաղի աշխարհը փայտակարանով հանգերծ: Սա-

1. Նոր-Ջուղայի հայոց գերեզմանատանը մի ամբողջ օր ման գաւուց յետոյ միայն յաղորդեց մեզ գտնել աղազ Ամիրի գերեզմանը, որի կէտը ծանկում էր հօգսով:

Ա. Ե.

կայն քաղաքական ինչ ինչ հանգամանքներ արգելք են հանդիսանում և Ամիր խանը չի կարողանում իրագործել իր ծրագրերը։ Արա երաջ պարոն Ամիրխանն Յ. Ամիրխանը նոյնպէս իր ժամանակի համբաւուր վաճառականներին է եղել Նոր Զուղայում։

Ահա յիշեալ հարուստ վաճառական Ամիրխան ազգատոհմի ծոցում սնել և մեծացել է Երզնի, 18րդ դարի երկրորդ կիսում։ Նրա ազգականներից այժմ ապրում են Նոր-Զուղայում և Պ. Թովհաննէս Ամիրխանեան եղբայրները և արանց ծերունի մայրը՝ Տիրուհին։ Վերջինս հաղորդեց մեզ մի քանի տեղեկութիւններ Ամիր օղլու կեանքի մասին, որոնք սակայն դարձեալ չեն լրացնում և լուսարարում իր գլխի կեանքի և գործերի նկարագրութիւնը։

Ամիրը, Տիրուհու ասելով, ծնել է մօտաւորապէս 1740 թւականին, Բուրաբիում։ Դա Պարսկաստանի Սպահան նահանգի հայաբնակ գաւառներից մէկն է, որի բնակիչները բեկորներն են այն մեծ գաղթականութեան, որ տեղի ունեցաւ ժլ. դարում (1606 թ.) Շահ-Աբբասի ձեռքով։ Այդ գաղթական գիւղացիներից մէկն է եղել Ամիրի հայրը՝ Ամիր խանը։ Յայտնի չէ, թէ ինչ տեսակ մարդիկ են եղել երգչի ծնողները և ինչ ազգեցուծիւն են ունեցել իրենց գաւառի վրայ։ Միայն պարզ է, որ նրանք եղել են գիւղի հարուստ ու յայտնի օջախներից մէկը և ապա գիւղից տեղափոխւել են Նոր-Զուղա։

Ամիրն սկզբնական ուսումն ասանում է գիւղում, ժամանակի գրագէտներից մէկի մօտ։ Այդ ժամանակաշրջանի գիւղերում դպրոցներ չկային. գրել-կարդալ սովորել ցանկացող պատանիները գիւղի գրագիւտութիւն իմացող մարդկանց մօտ էին ուսանում, որ զլիսաբարապէս լինում էին հոգևորականները, Դրանք Տեր-Թողկեան մանկավարժութեան տիպիկ ներկայացուցիչներն էին։ Գիւղերի իրականութիւնն այդ էր։ Երեւում է, որ Ամիրի ուսուցիչն էլ եղել է գիւղի քահանան։ Ռայց ինչ է

տալիս նա իր սանին։ Ինչ կարող էր տալ Պարսկաստանի խաւար անկիւնում սնած և դաստիարակւած մի տիրացու։ Նրա գիւտութեան պաշարն այնքան աղքատիկ է լինում, որ բաց ի հասարակ զրագիտութիւնից՝ ուրիշ բան չի սովորեցնում իր աշակերտին։ Ամիրը սակայն ուշիմ և սրամիտ երեխայ լինելով՝ առաջ է գնում ինքնաշխատութեամբ։ Այնուհետեւ նրա համար ստեղծուած են աւելի նպաստաւոր պայմաններ, երբ նրա ծնողները խաւար գիւղից տեղափոխւում են Նոր-Զուղա։ Սպահանի արուարձանն է Նոր-Զուղան, որ փռւած է նրա հարաւային կողմը, երեք քառորդ ժամ հեռու, մի ընդարձակ տարածութեան վրայ։ Նոր-Զուղան այդ ժամանակ, ինչպէս և այսօր, շրջակայ հայաբնակ գիւղերի համար մի տեսակ լուսաւորութեան կեդրոն էր։

Երկու տեսակէտով այդ արուարձանը երգչի կեանքի համար դառնում է արժեքաւոր։ Առաջինն այն է, որ նա գիւղական խաւար աշխարհից ընկնում է լուսաւոր և առաջադէմ մի շրջապատի մէջ։ Այդտեղ նա ծանօթանում է ս. Ամենափրկչեան վանքի հետ, որ այդ միջոցին կուլտուրական մի տեսակ օջախ էր։ Տեսնում է նա վանքի փառաւոր դպրոցը, որ այն ժամանակ սկսել էր հայկական կեանքի մտաւոր և գրական ասպարիզում նշանակութիւն ունենալ։ Տեսնում է տպարանը, հարուստ գրադարանը, Հասկանալի է, թէ այդ բոլորն ինչ խոր տպաւորութիւն պիտի գործէին ուսման տենչով տոգորւած պատանու մտքի վրայ։

Երկրորդ աւելի ուշադրաւ հանգամանքն այն է, որ այդ փորձիկ արուարձանում ձեւակերպւում է նրա աշուղական ապագայ կերպարանը։ Այդ դարում Նոր-Զուղայում բնակւում էին մի քանի յայտնի հայ աշուղներ, որոնցից յիշատակւում է Բաղդը օղլին։ Ամիրն ընկնում է նրանց շրջանի մէջ։ Այդ աշուղները նրա հոգու և մտքի վրայ այնքան խոր տպաւորութիւն են թողնում և նա այնքան է յափշտակւում նրանց քնարով, որ իր մտքի մէջ

վճռում է աշուղ դառնալ: Այդ գաղափարը դառնում է նրա իդէալը, նրա պաշտամունքի առարկան և նա ամբողջ հոգով ու սրտով նուիրում է իր պաշտած իստան ինչպէս Այնուհետեւ նա իր օրերի մեծ մասն անցկացնում է աշուղներին մօտ և անգիր սովորում նրանց յորինած երգերը: Կրնոյնից սեանելով իրենց զաւակի աշուղութեան հանդէպ տածած անհուն սէրը՝ մի շօնգուր են գնում և նուիրում նրան: Այդ օրուանից նա աշակերտում է աշուղներին և ամբողջ հոգով նուիրում իր շօնգուրին: Շնորհիւ իր սրամտութեան և ընդունակութեան, կարճ ժամանակամիջոցում սովորում է նա աշուղութեան արւեստը: Այդ դպրոցում սկսում է զարգանալ և նրա նեղ ու սահմանափակ մտաւոր հորիզոնը: Ուսուցիչ աշուղներն իրենց երգերով կերպարանափոխում են նրա միտքն ու հայեացքները և պատրաստում են մի աշուղի, որ յետագայում պարսկահայ աշուղական գրականութեան յայտնի երգիծարանը պիտի հանդիսանար: Այդտեղ էլ նա սկսում է երգեր ու ոտանաւորներ յօրինել, ազդելով, ի հարկէ, իր ուսուցիչներին մօտիւններից: Թէ՛ աշուղական այդ դպրոցում նա գլխաւորապէս մեծ ձեռքի ներքո է կազմակերպւում և աշուղական ինչ հիմնաւոր կրթութիւն է ստանում, հաստատ զգիտենք: Այնուհետեւ մենք ներան տեսնում ենք ճանապարհորդելիս դէպ ի Մուշ, նա բաւական չհամարելով իր ստացած աշուղական կրթութիւնը, ըստ ընդունուած սովորութեան, Թաւրիզի վերայով գնում է «Մշու Սուլթան Ս. կաթապետ», աշուղական շնորհ ստանալու համար: Այնտեղ ուխտ անելուց, մատաղ կտրելուց յետոյ, վերադառնում է Նոր-Ջուղա և իրեն նուիրած աշուղութեան արւեստին: Դրանից յետոյ, իրեն աշուղ երգիչ, չնգուրը ձեռքին, Թաւրիզով իսպահանի փէրիա և Չահարմահալ զաւառները, ինչպէս նաեւ Բասրա, Բաղդատ, իր երգիծական ձիրքով ուրախացնում է իրեն շրջապատող ժողովրդին և առանձին փայլ տալիս նրա հարսանիքներին և խրն:

Նոյններին, նա Նոր-Ջուղայում մրցում է Թաւրիզից եկած նշանաւոր մի աշուղի հետ, յաղթում նրան և հռչակ է ձեռք բերում:

Այնուհետեւ է փէրինի հետ, որը վախճանում է 1818 թւին¹, իսկ ինքը մեռնում է կնոջից ութ տարի յետոյ, այն է 1826 Յուլիս 25ին:

ԱՄԻՐ ԲԱՍՏԱՐՈՐԻԹԵԱՆ ԳՄԵՐԸ

Ամիր օղլին բնակւորութեամբ խոնարհ, սրամիտ և վառվռուն մարդ է եղել. նրա սրամտութեան մասին մեր ժամանակակից ծերունիները պատմում են հետեւեալը.

Մի անգամ երեւելի մի աշուղ լսած լինելով Ամիր օղլու համբաւը, գալիս է Նոր-Ջուղա, նրա հետ մրցելու համար: Նա քաղաք մտնելիս, մի տան դրան մօտ հանդիպում է Ամիր օղլուն, բայց չի ճանաչում թէ նա է, ուստի հարցնում է նրան, թէ՛ «Գորտեղ է բնակւում Ամիր օղլին»։ Նա պատասխանում է թրքերէն՝ «Գետր ման ամ» որ երկդիմի մտքով նշանակում է «տես, ես եմ», բայց օտարական աշուղն իսկական մտքով է հասկանում այդ օտարայայտութիւնը, այն է «չեմ տեսել», ուստի թողնում, հեռանում է: Այնուհետեւ օտարականը փողոցում կանգնած մարդկանց է հարցնում, թէ «Գորտեղ կարելի է տեսնել Ամիր օղլուն»։ Նրանք ցոյց են տալիս դրան մօտ կանգնած աշուղին. օտարականը զարմացած գալիս է դարձեալ Ամիր օղլու մօտ և հարցնում է թէ՛ «Գորտ ես Ամիր օղլին»։ Այս անգամ նա պատասխանում է. «Թան ման ամ», որի երկդիմի նշանակութիւնն է «ճանաչիր, ես եմ», բայց օտարականը դարձեալ իսկական մտքով է հասկա-

1. Ամիր օղլու գրեգմանի աջ կողքին ամփոփած է փէրինի մարմինը, որի գրեգմանաբար վրայ գրած է այսպէս.

Այս է տալիս փէրիմիմ,
Ամիր օղլու կողակցիմ,
Որ փոխեցաւ յաշխարհ վերիմ,
Բ. Ժ. Բ թվիմ և Գամիրա Ի. Ը-իմ.

նում, այն է՝ «չեմ ճանաչում»։ Երրորդ անգամ նորից է ներկայանում Ամիր օղլուն. նա պատասխանում է. «Բիլ մանամ», որի երկդիմի նշանակութիւնն է՝ «Գիտցիր, ես եմ», սակայն օտարականն իսկական մտքով է ըմբռնում, այսինքն «չգիտեմ» և հեռանում է։ Վերջը, սակայն, օտարական աշուղը հասկանալով Ամիր օղլու առաձների միտքը՝ ամօթահար հեռանում է Նոր-Ջուղայից, առանց այլ ևս նրան տեսնելու։

Ահա այն հատ ու կտոր տիղեկութիւնները, որ կարողացել ենք գտնել երգչի

մասին. իսկ նրա կեանքի այլ հանգամանքները՝ թէ Բնչպիսի միջավայրում և հանգամանքների մէջ զարգացել ու կերպարանւել է նրա երգիծական ձիրքը, Բնչ գործունէութիւն է ունեցել, ո՞վքեր են նրա կրթութեան Վրա զրել իրենց ինքնորոշ դրոշմը, ո՞ւր և Բնչպիսի շրջաններում է անցկացրել իր օրերը. — առհասարակ այս հարցերի մասին ոչինչ տեղեկութիւններ չկան. ուրեմն ասենք մի քանի խօսք էլ նրա երգերի մասին։

(Շարունակելի)

Ա. ԵՐԵՄԵԱՆ

ԲԵՐԷՔ ԻՆՁ ԶԱՅՆ

ԲՈՂՈՐ ՀԱՅ ՈՐԲԵՐՈՒՆ

Փողոցին մէջն եթէ երբեք հանդիպիք Մերկ լակոտ մը, սեւ ու խոշոր աչքերով. Որ կը շըրջի սուլելով «Մեր հայրենիք», Բերէք ինձ գայն, բերէք իմ գիրկըս սիրով։

Պիտի պագնեմ անոր ճակատը մըրոտ, Գըրոշմելով այնտեղ հոգի մ'ապրտամբ. Պիտի վառեմ աչքերուն մէջն առաւօտ, Հայաստանի արեգակին պերճութեամբ։

Արշալոյսի մ'երկունքն ունի անաւոր իր ամպոտած յօնքերուն տակը խռով. Բերէք որ ես սըրբեմ աչքերն իր աղուոր Այնտեղ գըծեմ նոր Հայաստան մը փառքով։

Կուրծքը պատեմ սեւ ժայռերէն վան - Տոսպի, Ինագնութեան Տիգրաններուն տամ հանճար. Եւ վարդանի մութ կարմըրութիւնը սըրտի, Որ բարձրանայ հըսկայանայ անդադար։

Ձուլեմ անոր երկու երկաթ բազուկներ, Սիրտ մը պողպատ, արեւ աչքեր հըրպաւ. Որպէս հոգի չընչեմ իըրոխտ բուք մեր. Թիկունք տալով կողը Մասեաց վեհափառ։

Անոր վառվռուն հոգիին մէջ ըստահակ, Որբութեան հետ կ'ապրի ազնիւ ցեղ մը հին. Անոր ծըծած կաթն արեւն է դառնորակ. Ու մայր չունի, Թուրքերը զայն կտորեցին։

Զայն փողոցները նետեցին ցընցոտիկ փափուկ ձեռքին ցուպ մը տալով պանդըխտի. Գընա՛ ըսին, դուն հոս չունիս հայրենիք Եւ ոչ հայր մը որ քաջերուն հետ հանգչի։ —

Արտասուելով դու որդեակ իմ գընացիր Մինչեւ Տէրգօր մինչեւ Նիւ-Ելթօր ու մինչեւ ... : Համբաները Հայ արիւնտվ ներկեցիր, Գըտնելու քեզ պատառ մը հաց, քիչ մ'արեւ։

Ո՞վ արտասուեց քեզ հետ ընկեր առ ընկեր. Ո՞վ սըրբեց այն ցօղն աչքերուդ յորդառատ. Համբուրեցին ու մատնեցին քու պարզ սէրն։ Հըպարտ հոգիդ լոկ քեզ մընաց։ — Բաւ է այդ։

Բաւ է քեզ այդ երբ երակիդ մէջն ունիս Վահագնեբրու աստուածային արիւնէն, Երբ զաւանի ես երիտասարդ իմ ցեղիս, Որ չի մատներ ոչ քաջութիւն և ոչ քնն։